որ լուր մը առնում իմ Անտօնիկէս եւ իւր հետ ա-
մուսնանալով մեզ ժառանդներ ունենանք (մեկուսի
ողբագին) ահ, եթէ ապրեր, հիմա 12 տարեկան մը

պիտի ըլլար : (Մարտիրոսին) Կարծեմ այդ երջանիկ
օրը հասած է եւ վերջապէս ձեռք պիտի անցընեմ
զինքը . . . եւ փափաքիս պիտի հասնիմ . . . ա-
հա կերթամ ես :

ՄԱՐՏ. Մեկուսի Անհամբերութեամբ : Էօֆ . . .

Տ. ՇՈՒՊ. Կը փափաքէի որ մէյմը բազկացս մէջ
գրկեմ իւր որդին, որն որ արդէն Իզմիր հասած է
կըսէք . . . ահ, որքան խաղցուցերեմ զինքը ծըն-
դացս վրայ :

ՄԱՐՏ. Բայց Տիկին, եթէ պիտի մեկնիք, աղէկ
կընէք որ ժամ առաջ ճանբայ

ՅՈՎ. Դոնէն ծանուցանելով : Միւսիւ Մէլիքեանին
որդին . . . (դուրսը նայելով եւ ցած) Պարսմնը
սիր . . . հա . (ներսին) Միւսիւ Վէնսան Մէլիք :

ՄԱՐՏ. Մեկուսի. Առ քեզի խառնակութիւն մ'ալ . . .

Տ. ՇՈՒՊ. Մէլիքին որդին :

ՄԱՐՏ. Մեկուսի, Հիմա պիտի ձանչնայ զինքը . . .
աղ բանը բուսաւ . . . բայց ես ի՞նչ ապուր ուտելու
ասանկ գործերու մէջ կը խառնուիմ

ՏԵՍԻԼ Ե.


ՆՈՅՆՔ, ԱՆԹՈՒԱՆ Մէլիք, երիտասարդաց :

Ա. Մէլիք. Կինը չը տեսներ : Հիմա ալ պատրաստ
եմ, սիրելիս :

Տ. ՇՈՒՊ. Բացազնութեամբ : Ինքն է, բալորովին
ի՞նքն է :

Ա. Մէլիք. Հոս գեղեցիկ սեռէն կայ եղեր, (ցած) եւ բան մը չես ըսեր ինձի (բարեւելով) Տիկին . . .
ՄԱՐՏ. Ցած: Զգուշացի՛ր, Մարիանէն է .
Ա. Մէլիք. այլայրութեամբ, ի՞նչ կըսես . . .
ՄԱՐՏ. ցած: Ա.յ՛, ինքն է . . . եւ ոչվոլմէրը լեցուն պահած է դեռ . . .
Ա. Մէլիք. ջիղերը կը բուշման: Ա.հ . . .
Տ. ՇՈՒՊ. Անտօնիկ, դուք չէք Անտօնիկը . . .
Ա. Մէլիք. Անտօնիկ . . . հայրս կը հարցընէք:
Տ. ՇՈՒՊ. Հայրդ . . . հ՛չ, չէ, անկարելի է . . .
զու Վիշնիկն ես ուրեմն:
Ա. Մէլիք. Նոյն ինքն . . . եթէ կուզէք Մարտիրոս աղային հարցուցէք:
ՄԱՐՏ. Ը' . . . դուք . . . արդէն:
Տ. ՇՈՒՊ. Բայց ի՞նչ նմանութիւն . . . անոր կենդանի պատկերը . . . եկու ուրեմն համբուրեմ զքեզ:
Ա. Մէլիք. Մէկուսի Հիմա թուալէթս պիտի աւրէ:
Տ. ՇՈՒՊ. Բայց ըսէ տեսնեմ, ի՞նչ կընէ հայրդ, ոյն անդութը, իմ վշտացս պատճառը:
Ա. Մէլիք. Իմ հայրս ձեր վշտաց պատճառը . . .
Բայց դուք ո՞վ էք տիկին . . .
Տ. ՇՈՒՊ. Միտքդ չի դար Մարիանէն, որ քեզի այնքան շաքարներ, բաներ կը կերցըներ միշտ:
Ա. Մէլիք. Ա.յ՛, այ՛, հիմա միտքս կուգայ . . .
Ճշմարիտ՝ անուշեղնեներուդ համը դեռ բերանն է . . .
է, ի՞նչպէս էք նայինք, դուք ալ աղէկ էք . . .
Տ. ՇՈՒՊ. Ո՛չ, քու տեսութիւնդ ցաւերս վերանորոգեց եւ հին յիշատակներ սրտիս մէջ արթնցուց:

Ա. Մէլիք. Արդարեւ յիշատակ . . . ինչպէս ամեն բան չուտ կանցնի եւ յիշատակը միայն կը մնայ . . . հիմա հայրս ալ եթէ տեսնես, ճշմարիտ խիստ դժուարաւ կը ճանչես զինքը .
Տ. ՇՈՒՊ. Շատ փոխուածէ է ուրեմն:
Ա. Մէլիք. Մէկուսի Աղէկ մը խաբենք: (բարձր) Մազն ու մօրուքը ճերմըկած, կռնակը Պօլսոյ կամքին կամարին պէս ծռած. . . ճեռքերն ու ուռքերը դուդուջուն . . .
Ա. Մէլիք. Ի՞նչ, այդ աստիճան աւրուե՞ր է խեղճը,
Ա. Մէլիք. Մարտիրոս աղային հարցուր . . .
ՄԱՐՏ. Խաթրդ չը մնայ, բայց փոտած տաճճ է քարձեր . . .
Ա. Մէլիք. Փոտած, հա՛, ճիշդ բառը գտար:
Տ. ՇՈՒՊ. Հոգ չէ, հոգ չէ, ես ան կերիտասարդացնեմ . . . ես անոր կերպը գիտեմ . . .
Ա. Մէլիք. Բայց սա եկողը (ևս երազով եւ ձախ կողմի դուռը ցոյց տալով) քեռարդիդ . . . օդիորդն է արդեօք . . .



ՏԵՍԻԼ Զ.

ՆՈՅՆԻ ԵՒ ՀՈԳՈՒԾԻ

ՄԱՐՏ. Ճիշդ ինքը, (Օրինորդիմ ընդ առաջ երրարդ) Հոգուհին է . . .

Ա. Մէլիք. Խոնարհելով՝ Մատմազել
ՄԱՐՏ. Քեռորդին, քեզի կը ներկայացնեմ Միւսիւ...
Ա. Մէլիք. Վէճնսան
ՄԱՐՏ. Վէճնսան Մէլիքեան :
Ա. Մէլիք. Մէլիքեանին որդին
ՄԱՐՏ. Երգիծօրէն Մէլիքեանին որդին
Տ. ՇՈՒՊ. Մեկուսի Մէլիքեանին որդին
Ա. Մէլիք. Առանձին եւ զչողուի դիտելով) Աքան-
չելի աղւոր ալ ըսես կարժէ (բարձ) օրիորդ ձեր լուսահոս աչքերը դեմքերնուդ վրայ այն-
պիսի լուսնթագական ճառագայթ մը կը շողովացը-
նեն ու կը փայլատակեն որ աչքերս կառնեն :

ՀՈԳ. Առանձին Հաւնեցաւ (առաջը կը նայի) :
Ա. Մէլիք. Դիոս՝ միրուելու համար ստեղծած է
զքեզ :

ՀՈԳ. Առանձին : Յուսացածիս չափ բան մը չէ . . .
Ա. Մէլիք. Եւ ինչ վարդագոյն գոյներ Եր-
ջանին է այն պարտիզապանը՝ որ կարող կը լոյս լուլ
իւր կողովը այդպիսի դեղձերով

Տ. ՇՈՒՊ. Մեկուսի : Հայրը չելեր՝ վրաս կը մնար,
ճիշդ անոր քթէն է ընկեր

ՄԱՐՏ. Տիկին, ներեցէք, բայց եթէ կը բարեհա-
ճիք, վայրկեան մը մինակ թողունք զիրենք, որ քիչ
մը զիրար ճանչնան . (մեկուսի) սա ինչպէս նետէինք
գլխերնոււս :

Տ. ՇՈՒՊ. Այո՛, այո՛, կը հասկընամ Մնաք
բարով Վէճնսան, ես ալ Պուքքէշ կերթամ, եթէ հօրդ
բան մը ըսելիք ունիս կամ եթէ նամակ պիտի գրես
պատրաստէ, ես մէկ պահէն կուգար կ'առնեմ:

ՄԱՐՏ. Ցած առ Ա. Մէլիքեան ես հիմա այս կինը
կ'առնեմ գուրս կելլեմ, դու ալ գործին էութիւնը
եւ ովլ ըլլալդ հասկցուր Հոգուհին :

Ա. Մէլիք. է՛ այս անշուշտ

Տ. ՇՈՒՊ. Ո՞չ ի՞նչ աղէկ բան է երիտա-
սարդութիւնը :

ՄԱՐՏ. Այս, մանաւանդ եթէ երիտասարդութիւնը.
Երիտասարդ ըլլայ

Տ Ե Ս Ի Լ է .

ԱՆԹՈՒԱՆ Մէլիք. ՀՈԳՈՒՃԻ

Ա. Մէլիք. Մեկուսի, Վերջապէս գացին
(բարձ) Օրիորդ

ՀՈԳ. Պարոն

Ա. Մէլիք. Մեկուսի Հոյ, գարշելի, աս պալենային
մէկն ալ չարունակ կողս կը մոնէ

ՀՈԳ. Առանձին : Զեւը գէշ չէ

Ա. Մէլիք. Առանձին: Շիտակը աղւոր կտոր
աչքերն ալ էլէնիին կը չալեն . Պոլիս՝ պանդոկը տե-
սած աղիկս :

ՀՈԳ. Մեկուսի, Բայց իւր դէմքը

Ա. Մէլիք. Վերջապէս օրիորդ

ՀՈԳ. Պարոն, ճմարիտ է արդեօք թէ դուք 26
տարեկանէն աւելի չըկաք :

Ա. Մէլիք. Ո՞չ, օրիորդ, խարեր են զձեզ
Եւ ինձի պարտաւորութիւն մը կը համարիմ ճմա-
րիտը յայտնել ձեզի :

ՀՈԴ. Հետայրիութեամբ . է՞
Ա. ՄԵԼԻՔ. Ես օրիորդ քըսան Եւ եօթը
տարեկան եմ :

ՀՈԴ. Աւելի չըկայ
Ա. ՄԵԼԻՔ. Պակաս անգամ չը կայ

ՀՈԴ. Շատ պղոփիկ էք դեռ բարեբաղդտ-
րար, դէմքերնիդ աեսնողը աւելի կը կարծէ

Ա. ՄԵԼԻՔ. Այդպէս կերեւի ձեզ

ՀՈԴ. Աւելի լաւ հասուն հասակ եւ կատա-
րելութիւնն ալ երաշխաւորութիւններ են
է ամուսնութիւնը այնքան վտանգներ ու-
նի

Ա. ՄԵԼԻՔ. Ես ալ ձեզի պէս կը խորհիմ
Ամուսնութիւնը սարսափելի բան է
շատ սարսափելի բան Եւ անտարակոյս օր մը
պիտի դայ որ ամենքն ալ պիտի համոզուին թէ
ամենքն ալ պիտի տեսնեն որ

ՀՈԴ. Ի՞նչ բան :

Ա. ՄԵԼԻՔ. Բայց բայց մինչեւ որ առեալ
զձեռն չըլլայ նէ մարդ զիրար չը կրնար սիրել

ՀՈԴ. Պարոն այդ սկզբունքը Օ'
ոչ, ոչ, Եւ յուսամ թէ պարոն, այդպէս բան ը-
րած չէք երբէք

Ա. ՄԵԼԻՔ. Օ' երբէք, երբէք իմ
սիրտս բոլորովին նոր է Եւ երբէք չէ բաղլած
Եւ այս վայրկենիս ձեր քով կը բաղլիէ, ձեզ համար
կը բաղլիէ ո՛հ, Հնդուհի Ես բնաւ սէ-
րը չի ճանշեր, չնորհակալ եմ, հնդուհի, չնորհա-
կալ եմ, որ այս անուշ Եւ հաճելի բանը ինծի ու-

սուցիր, Եւ յուսամ թէ պիտի պատասխանես զիս
տոչորող հրայն, ովք հրեշտակդ երկնից :

ՀՈԴ. Դէռ պէտք է խորհիմ

Ա. ՄԵԼԻՔ. Խորհիլ, մինչդեռ հրդեհը սիրտս ար-
դէն պատած է Ա՛հ, օրիորդ, հրաբուխ մ'է
որ ձեզի կաղացէ Եւ ձեր ոտիցը (կուզէ ծըն-
կի զալ եւ մեկուսի կըսէ) Ա՛հ, սա պալէնան զիս
պիտի մեռցընէ (Հոգուհիին) ոտիցը կիցնայ
(Մեկուսի) Վերջապէս յաջողեցոյ, (ծնկի կուգայ) :

ՅՈՎ. Իմաց տաղով . Միւսիւ Վէնսան Մէլիքեանը :

ՀՈԴ. Ի՞նչ կըսես

Ա. ՄԵԼԻՔ. Վէնսանը :

Վ. ՄԵԼԻՔ. Մտնելով . Ես եմ :

Ա. ՄԵԼԻՔ. Մեկուսի. ահ, հայրասպան

Վ. ՄԵԼԻՔ. Կը զարմանաս զիս հոս տեսնելուդ
այնպէս չէ

Ա. ՄԵԼԻՔ. Այո Եւ չափազանց

Վ. ՄԵԼԻՔ. Եւ այսպէս ցուրտ, սառուցեալ գոտի-
էն ալ ցուրտ ընդունելութիւն մը կընէս քու
միակ Եւ հարազատ Եղբօրդ

Ա. ՄԵԼԻՔ. Մեկուսի. Եղբայրը չունջ կառ-
նում

ՀՈԴ. Ի՞նչ, պարոն, իւր եղբայրն էք

Վ. ՄԵԼԻՔ. Այո, օրիորդ, Եւ իմանալով որ ին-
քը հոս է, փութացի գերարշի

ՀՈԴ. Ես կարծէի որ ինքը մէկ հատիկ է

Ա. ՄԵԼԻՔ. Ես ալ

Վ. ՄԵԼԻՔ. Ամենեւին, ամենեւին, մենք երկու
եղբայր ենք, Բիէռ եւ Վէնսան Ես Վէնսանն եմ

Ա. Մէլիք. Այո՛, այո՛, վէնսանը ինքն է . . .
(մէկուսի) բայց աս ո՞ր սատանին ծակէն ելաւ .

Վ. Մէլիք. Հիմա որ եղայրութիւննիս հաս-
տառուեցաւ, ըսէ ինձ բացարձակաբար եւ արշիբա-
ցարձակաբար . . . իմ ներկայութիւնս կը վրդովք
արդեօք ձեր զրոսանքները . . . Վասն զի օրիորդ,
եթէ տեսածս ցնորք մը չէր (մէկուսի) չէր ա. Հո-
գուիիին. եղայրս . . . ձեր ոտից գարշապարացը
փարեալեւ խոնարհես էր երր ես հոս մոռայ . . .

Ա. Մէլիք. Լաւ, դիցո՞ւք թէ ցնորք մը . չըլլոյ
այդ տեսածդ, ի՞նչ հետեւութիւն կելնէ ատկից,
պարոն . . . եղայր իմ . . .

Վ. Մէլիք. Օ՛ . . . հետեւութիւն. — հետեւու-
թիւնը սա է որ եթէ դուք օրիորդին մէկ ոտքը իյ-
նաք, ես ալ ամենա . . . անմիջապէս իւր միւս ոտ-
քը պիտի իյնամ . . . (մէկուսի) բարեբազդաբար
օրիորդն ալ կաղ չէ եւ մէծի պկտիկի կոիւ ալ չել-
ներ .

Ա. Մէլիք. Դու . . . իւր նոքը . . . ուրեմն
զիրար կը ճանչնաք արդէն . . .

ՀՈԳ. Խիստ քիչ . . . շոգենաւի մը մէջ տեսու-
թիւն ըրած ենք .

Վ. Մէլիք. Եւ սեղանին վրայ քովէ քով նստած:

Ա. Մէլիք. Մէկուսի. Շոգենաւու մը սրահը . . .
սեղանի տակ . . . մթութեան մէջ . . . ո՞հ պա-
տանեկութիւնս միտքս կուգայ . . .

Վ. Մէլիք. Կը տեսնէք ուրեմն, սիրելի եղայր
իմ, որ ես ալ իրաւունք ունիմ իր վրայ . . .

Ա. Մէլիք. Դեռ կը յանդդնիս, անպիտան .

Վ. Մէլիք. Շարունակէ, շարունակէ, ինչ որ
ըսես պիսոի համբերեմ . . . ինչ ընեմ մեծ եղայր
եւ . . . գերարշիամենամեծամեծ եղայրս. էք
գտնուէր . . .

ՀՈԳ. Անդուանին, Անդրանիկը դժւռք էք .

Ա. Մէլիք. Այո՛, ես եմ անդրանիկը . . . եւ . . .
սանկ տարիի մը չափ ալ իրմէ մեծ ըլլալու եմ . . .

Վ. Մէլիք. Թո՞ղ տարի մը ըլլայ . . . այդքանն
ալ բաւական նախապատութիւն կուտայ.

Ա. Մէլիք. Ուրեմն մրցի՞լ կուգես իմ հետո .

Վ. Մէլիք. Եթէ չը զիջանիք . . . (մէկուսի)
ապուշի մը պէս աղջիկը ձեռքը յանձնելու չեմա . . .

Ա. Մէլիք. Ուրեմն բացարձակապէս պատերազմ
կը հրատարակէս ինձի դէմ . . .

Վ. Մէլիք. Արշիբացարձակապէս . . . Կայեն Արելի
պատութեանը երկրորդ տպագրութիւնը կոկինք
(մէկուսի) Հայր Մանուէլ Զախոջախեանը իմանայ ալ
հոգ չէ, մեր մէջ գրական գողութիւնը չը պատժուիր.
տեսէք, Գարագաչեանին քերականութիւնը օրինակե-
լով, հեղինակ հանդիսացողներուն ովլ ինչ ըսած ու-
նի . . .

ՀՈԳ. Պարոններ, Աստուծց սիրուն, մի . . .

Ա. Մէլիք. Դուք ներա գացէք վայրկեան մը, Օ-
րիորդ, մի ներկայ գտնուիք այս ընտանեկան կը-
ոյն . . . ես զանի հանգարտեցընելու եւ զակելու
լաւ միջոցներ ունիմ . . .

Վ. Մէլիք. Ո՞հ . . . Օ՛րիորդ, այս տեղէն հե-
ռանալէ առաջ՝ տուէք գոնէ ձեր քուէն եւ որոշեցէք
մեր բաղդը .

ՀՈԴ. ԹՌԱՂ զիս , պարոն , սեղանին վրայ ինձ ըրած-
ծըդ երբէք չը պիտի մոռնամ . . . (կերպան) .
Վ. ՄԵԼԻՔ. Սա անիծեալ թթուն ալ մոքէն չե-
լաւ գնաց :



ՏԵՍԻԼ Բ.

ԱՆԹՈՒԱՆ ՄԵԼԻՔ , ՎԵՆՍԱՆ ՄԵԼԻՔ .

Ա. ՄԵԼԻՔ. Ահա տղաս երկուքնիս առանձին մը-
նացինք :

Վ. ՄԵԼԻՔ. Ահա հայրիկ երկուքնիս առանձին
մնացինք . . .

Ա. ՄԵԼԻՔ. Ի՞նչ վիճակի մէջ կը գտնեմ զքեզ ,
ի՞նչ գործ ունիս դու հոս , անդամազննութեան դա-
սերդ այս կերպով . . . կը կատարելագործես . . .
Ես զքեզ Պօսֆօրի ափանց վրայ կը թողում . . . բը-
ժըշկութիւն սորվելու համար եւ դու Միջերկրակա-
նին եզերքներուն վրայ թոչուն կ'որասս . . . ըստ
իս աւելի աղջկ կը լլար որ կանանց հետ սիրահարու-
թիւն ընելք առաջ՝ սա պարտքերդ վճարէիր , որ քիչ
բան ալ չեն : Դերձակիդ Եէմէնիմեանին 28 ոսկի ,
Թրիքօթէօզին՝ ճերմակեղենի համար , 165 ֆրանք ,
Հէրալմ՝ կօշիկի համար , 225 ֆրանք . . .

Վ. ՄԵԼԻՔ. Մէկուսի ճաշարանին եւ լուսա-
րար էլենին հաշիւները չիկան . . .

Ա. ՄԵԼԻՔ. Դպրոցէն առած հագուստներդ քեզի
չեն մի բաւեր եւ ի՞նչ ապուր ուտելու կելլէս Հերա-
լմ կօշիկներ չինել կուտաս՝ որ մէկ զոյգը 50 ֆրանք

Է անցուցեր է հաշիւը . . . եւ հիմա ալ կար-
ծես որ այս վիճակիդ մէջ քու ամուսնութեանդ հա-
ճութիւն պիտի տամ . . .

Վ. ՄԵԼԻՔ. Բայց , հայրիկ , գթաւ վրան եւ այս
դժուարին կացութենէն ազատէ զիս . . .

Ա. ՄԵԼԻՔ. Ատոր միայն մէկ միջոց մը կայ . . .
այն է . . . այս իրկուն մեկնող չոգենառով շիտակ
Պօլիս վերադառնալ :

Վ. ՄԵԼԻՔ. Վերադառնալ . . . բայց հազիւ մէկ
քանի ժամէ ի վեր հասած եմ դեռ հոս . . .

Ա. ՄԵԼԻՔ. Այո , այո , հիմա չուտ՝ չորրորդ կար-
գի տոմսակ մը կառնես . . .

Վ. ՄԵԼԻՔ. Հայր իմ , չորրորդ կարգի տոմսակ
չըլլար . . .

Ա. ՄԵԼԻՔ. Վերնայարկի , վերնայարկի , կը հաս-
կընամա , թող երրորդ կարգի ըլլայ . . .

Վ. ՄԵԼԻՔ. Բայց , հայր իմ , գիշերը նաւուն վեր-
նայարկին վրայ խիստ ցուրտ կընէ :

Ա. ՄԵԼԻՔ. Ցուրտ մի կընէ . . . առ ուրեմն սա
վերարկուն , կը տեսնես ինչ բարի հայր եմ , իմ կըռ-
նակի հագուստ անդամ քեզի կուտամ . . . (Մէ-
կուսի) արդէն հին ալ է ա , (Վէնսանին) բայց կոր-
ուրուէ , գնա (Մանդոն կուտայ) :

Վ. ՄԵԼԻՔ. Բայց , հայր իմ , ինչպէս մեկնիմ , ոչ
անհնար է այդ , ոչ , ոչ , . . .

Ա. ՄԵԼԻՔ. Կը յանդգնիս դեռ դիմադրել . . .

Վ. ՄԵԼԻՔ. Այո , կը դիմադրեմ եւ քու շահուդ
համար . . . վասն զի եթէ երթամ՝ դու այդ դե-
ռահաս աղջկան հետ պիտի ամուսնանաս . . . եւ

քու հասակդ մարդու մը այնպիսի կայտառ օրիորդի
մը հետ ամսւսնութիւնը՝ շիտակը շահաւոր գործ մը
չէ եւ աղջկ կընէք որ այդ գործին մէջ չը մոնաք,
վասն զի վերջը ամենաանհրաժեշտագոյն կերպիւ
մնանկութիւն . . . կայ :

Ա. Մէլիք. իմ հասակս . . . ինչ է եղեր իմ հա-
սակս . . քու հայրդ զըտնուելուս համար կարծ ես որ
քեզի չափ առոյդ չեմ ես ալ . . . հա՛ . . . հա՛,
հա՛ . . . դուք ձեր պատանեկութեան օրերէն
սկսելով՝ մոլութեանց եւ բղախոհութեան ամեն
ստհմանները ոտնակոլս ընելով երիտասարդութեան
ատեն կատարեալ ծեր կը դառնաք . . . տես-
քերնիդ կը խաբէ, բայց մարմիննիդ կմախք մը դար-
ձած է . . . եւ այսօր, այս վայրկենիս, ես որ քու
հայրդ եմ, ես քեզնէ երիտասարդ եմ, ահա . . .

Վ. Մէլիք. Բայց, օր մը չէ օր մը, կինդ պիտի
իմանաց որ տարիքէդ եռուունէն աւելի աշուններ կը
գողնաս, եւ այն ատեն . . . քու անխոհեմու-
թեանդ պատիմը պիտի ընդունիս . . վ գիտէ ալին-
չեր պիտի գան գլխուդ (ձեռները իւր զիյուն երկըն-
ցընելով) :

Ա. Մէլիք. Ո՞չ, ո՞չ, ան չիմանար իմ տարիքս,
ես ալ բնաւ դժգոհութեան առիթ չեմ տար ի-
րեն . . .

Վ. ԵՆՍԱՆ ՄէլիքեԱՆ երգելով.

Երբ կինդ տանիս պարահանդէ՛,
եր հետն պարել դու չը կարես
եւ անկիւն մը պատին փակած,
Տիկնոջդ ոստոստն պիտի գիտես . . .

ԱՆԴՈՒԱՆ ՄէԼԻՔԵԱՆ

Անմիտ, ես լաւ պարեմ քան քեզ՝
Բոլքա սօթիչն ու մազուրքան,
Քատրիլ ըսես խիստ աննըման,
Ե՞ս մէկ պարեմ, ու զու ալ տես :

Պարելով

Սրդ ես մինակ նազիմ ճեմեմ,
Մէկ ոտք մը հոս մէկ հոն նետեմ.
Կայթեմ սատնում զերթ մարախ,
Հլայ հանդէս մեր ուրախ :

Վ. ԵՆՍԱՆ ՄէԼԻՔԵԱՆ

Թէ եւ կայթես մարախանմնան,
Սակայն ատոր՝ անցաւ մօտան,
Եւ թէ տեսնէ ոք այդ քու պար,
Վրադ խնդայ քահքահաբար . . .

Հիմա ցատքելն եղաւ պարիթ,
Տէ՛ս իմ խաղալս ջանա ուսնիս,
Եւ նոր ձեւ տաս քու հին պարիդ,
Թէ պատանի ըլլալ կամիս :

(Երածշուրիւնը Ռաբդ—Պատ թօլիան կը նուազէ
եւ վ. Մէլիքեան կը պարէ) :

Ա. Մէլիք. Է՛հ, այդ դժուար բան մը չէ, այդ
ես ալ կընամ ընել . . .

Վ. ՄԵԼԻՔ. Օ՛ն, ուրեմն միասին խաղանք : (Երածշուրինը կը շարունակէ եւ կը պարեն ի միասին) :

Վ. ՄԵԼԻՔ. Պրավօ, հայրիկ, կեցցէ՛, կեցցէ՛, ձշմորիտ սքանչելի կերպով կը խաղաս, ստուգիւդու վտանգաւոր ես եղեր, ալ քեզնէ վախնալուէ . . . եւ շիտակն ըսելով չեմ հասկընար թէ ի՞նչ հարկ կայ զիս ճանբելու, . . . մինչդեռ ամեն առաւելութիւններ քու կողմէդ ըլլալէն ի զատ աղջիկն ալ արդէն զքեզ կը սիրէ . . .

Ա. ՄԵԼԻՔ. Անտարակրյա . . . բայց պէտք է մեկնիս եւ անմիջալիս . . .

Վ. ՄԵԼԻՔ. Բայց հայրիկ կը շափաղանցէք ալ եւ զիս կը պարտաւորէք վերստին մրցման եղնելու ձեր հետ :

Ա. ՄԵԼԻՔ. Մրցի՞լ կը փափաքիս, այնպէս չէ՞ . . . ուրեմն, շատ աղեկ, մրցինք, մրցինք որ Մասկոփ գագաթէն ջուր խմող քիթ ինքցընեմ, եւ իմ առաւելութեանց ծանրութեանը տակ զքեզ ճղմեմ . . .

Վ. ՄԵԼԻՔ. Ուրեմն համութիւն կուտաս մըրցման :

Ա. ՄԵԼԻՔ. Այո՛, բայց պայմանով մը . . . քու հայրդ ըլլալու եւ ոչ մէ՛կը պիտի իմանայ . . .

Վ. ՄԵԼԻՔ. Անշուշտ . . . եւ եթէ այդպէս չըլլար, մրցման ինչ հարկ կը մնար . . .

Ա. ՄԵԼԻՔ. Լաւ ուրեմն, ալ գնահ ինչ որ կուզէս ըրէ, ձեռքէդ ինչ որ կուզայ ի գործ զիր, այնքան երկիւղ չունիմ որ բոլորովին ազատ կը թողում զքեզ . . .

Վ. ՄԵԼԻՔ. Խիստ վեհ սիրտ մը ունիք հայր իմ, ամենախիստ . . .

Ա. ՄԵԼԻՔ. Մեկուսի, երջամ ես ալ սա հօժէնին գտնամ ու հետք աւրուիմ՝ պատրուակով մը, շիտակը Հոգուհին անոր պէս երկու հարու ծոցէն կը հանէ . . . (կերպայ) :

Տ Ե Ս Ի Լ Թ.

Վ. ԵՆՍՄՆ ՄԵԼԻՔ. վերջը ՄԱՐՏԻՐՍՍ

Վ. ՄԵԼԻՔ. Հայրս իրաւցընէ սատանային մէկն է եղեր եւ կամաց կամաց համոզուիլ սկսայ թէ ոտքիս ներքեւ ձմերուկի կեղեւ դնելով, աղջեկը ձեռքէս պիտի առնէ . ինչպէս ընենք հիմա . . . իմ կողմանէս օրիորդը հրապուրելու համար ունեցած ամեն միջոցներս ի գործ զրի արդէն . եւ անօգուտ եղան : (Կը նսի թիկնարոռի մը վրայ, ուր հայրը յիշ մը առաջ վերարկուն ձգած էր) :

Ա՛հ, ամենը բարձր ընկերութեանց եւ քաղաքակրթեալ ընտանեաց մէջ մտած չըլլալուս արգասիքն են, վասն զի հոն՝ եւ միայն հոն կաւանդուի այն հազար տեսակ չնորհավի շարժուածքներու, գերագեղածեւ ձեւերու եւ մեղրահոս խօսուածքներու հրապուրիչ եւ համելի արհեստը . եւ ես՝ աւազ, դպրոցէն, հասարակաց պարահանդէսներէն, գերձակուհիներէն եւ լուացարարուհիներէն անդին երբէք անցած չեմ. . Բայց ի՞նչ կայ տակս (ոսի ելնելով) Օ՛, հօրս՝ առատածեռութեամբ ինձ չնորհած վերարկուն . . բայց ես կարծր բանի մը վրայ նստէր էի, մի գուցէ իւր ըըսակն ըլլայ (գրանները փնտուելով) եւ բերդաւայ մը

հանելով դուրս) է . . . աղեկ, մարդագետնի վը-
րայ նստած եմ եղեր . . . բայց այս կակուզիկ
մարդագետինը չէր անշուշտ. միսերս ցաւցընողը
(գրանները փետուելով) ուրիշ բան ալ ըլլալու է . . .
թղթապանակ մը . . . եւ մէջը բնակիչներ ալ ու-
նի (կը բանայ) այս ինչ է . . . պահանջատերերուս
հաշուեթղթերը . . . այս մարդիկն ալ ուր երթամ
դէմս կելնեն . . . Արապին ըստածն է « Իզմիրէ
խաչտի խուրդուլամատի » . . . անցագիր մը . . .
աս աւելի աղեկ . . . հիմա ես ասոնցմով . . .

ՄԱՐՏ. Դրանը առաջ երեւնայով եւ խօսին ընդ-
միջելով, Անխոհեմ, դու դեռ հոս կը կենաս :

Վ. ՄԵԼԻՔ. Կերթամ, ահա, կերթամ, եւ անդառ-
նալի կերպով . . . մէկ մալ իմ անունս անգամ չը
պիտի լսես, ըստ միայն հոգուհին որ չոգենաւուն
սրահը մտքէն չը հանէ . . . յիշեցուր միշտ իրեն շո-
գենաւուն սրահը . . . (դուրս կեղմէ) :

Տ Ե Ս Ի Լ Ժ Ո

ՄԱՐՏԻՐՈՍ վերջը ՀՈԳՈՒՀԻ

ՄԱՐՏ. Բայց ի՞նչպէս քեռորդիս ՄԵԼԻՔԵԱՆԻՆ
տամ . . . անառակին մէկը որ իւր հարըստու-
թեանը կէսը կանանց հետ սպառած է . . . բայց
յուսամթէ չոգուհին ալ զինքը . . .

ՅՈԳ. Իւր սենեկին դուրս զալով. Մինակ էք հոս
հօրեղբայր իմ . . .


ՄԱՐՏ. Հա՛, աղեկ որ եկար, շիտակն ըսէ, քաշուիլ
պէտք չէ, փեսացուիդ չը հաւնեցա՛ր, այնպէս չէ . . .
ՀՈԳ. Բայց ոչ, ինչու . . . քէշ չէր . . . եւ
եղբօրմէն աւելի քաղաքավար էր . . .

ՄԱՐՏ. Եղբօրմէն, ի՞նչ եղբայր . . .

ՀՈԳ. Բիէռը . . .

ՄԱՐՏ. Ո՞ր Բիէռը, ի՞նչ Բիէռ է այդ . . .
ՀՈԳ. Բայց ինձի մնայ, Վէնսանը աւելի կը յարմա-
րի ինձ :

ՄԱՐՏ. Մեկուսի. ՏԵ՛՛ Աստուած . . . Բիէռ մը-
նալ ելաւ հիմա . . . ցըք . . . բայց ես ի՞նչ ա-
պուր ուտելու ասանկ գործերու մէջ կը խառ-
նըսուիմ . . .



Տ Ե Ս Ի Լ Ժ Ո

ՆՈՅՆՔ. ԱՆԴՈՒԱՆ ՄԵԼԻՔ.

Ա. ՄԵԼԻՔ. Ահա հիմա երկուքնիդ ալ հոս էք,
Մարտիրոս աղայ, մատմազելը ձեզի իմացուց . . .

ՄԱՐՏ. Այո՛ այո՛, ամեն բան իմացայ, բայց ես
շիտակը բնաւ այս գործին մէջ խառնուիլ չեմուզեր,
կարծեմ գէշ չըլլար մէյմը քրոջս կամքը հարցընենք :

Ա. ՄԵԼԻՔ. Ուրեմն հիմա տիկին մօրդ հաւանութիւնն
առնել հարկ կըլլայ. . .

ՀՈԳ. Զեմ կարծեր որ մայրս մերժէ, բայց ինձի
այնպէս կը թուի թէ ձեր հօրը հաճութիւնն ալ առ-
նել պէտք է . . .

Ա. Մէլիք. Օ՛ . . . այդ եղածէն համարէ . անոր
հաւանութիւնը գրանիս մէջն է . . . այդ գործը
թող ինծի մնայ :

ՀՈԳ. Կը ցաւիմ որ ինքն ալ չը կրցաւ գալ իզմիք
եւ . . .

Ա. Մէլիք. Անոր գալը անհնար է, վասն զի բնաւ
չը սիրեր տեղ երթալ, մանաւանդ ճանբորդութիւն
ընել :

ՅՈՒՍ. Իմաց տալով. Միւսիւ Անդուան Մէլիք-
եան . . .

Ա. Մէլիք. Անզամ . . .
ՄԱՐՏ. Հայրը . . .

ՏԵՍԻԼ ԺԲ.

ՆՈՅԲ, ՎԵՆՍԱՆ Մէլիք

Վ. Մէլիք. ծերի կերպարանի մտած, բերուցայով
եւ հօրը վերարկուովլի. Ո՞չ . . . Մարտիրոս աղան,
իմ վաղեմի բարեկամն է, եկո՞ւ ոլագուբոփնք . . . զըր-
կուինք :

ՄԱՐՏ. Մեկուսի. Հիմա խելքս կը թոցընեմ. . .

Ա. Մէլիք. Մեկուսի. Մեր անզգամն է . . . իմ
վերարկուս է հագեր . . .

Վ. Մէլիք. Օ՛ . . . օ . . . դուք էք, պարո՞ն . . .
այս կերպով կը կատարելագործեք անդամազննու-
թեան դասերնիդ . . . ես զքեզ Պառփուի ափանց
վրայ կը թողում բժշկութիւն սորվելու համար եւ

Դ. Միջերկրականի եզերց վրայ թուզուն կ'որսաս եւ
առանց հայրիկիդ հրամանին :

Ա. Մէլիք. Դուք . . . իմ հայրս . . .

Վ. Մէլիք. Ես քսա հայրդ չեմ, . . . ուրեմն դու
Մէլիքեանին որդին՝ Վէնսանը չեմ :

Ա. Մէլիք. Մեկուսի. Ի՞նչ ըսեմ հիմայ, ի՞նչ պա-
տասխանեմ . . .

Վ. Մէլիք. Բարեբաղդաբար իմ ովլ ըլլալս գիւ-
րաւ կընամ հապտատել . ահաւասիկ Պուքրէշն ա-
ռած անցագիրս Տեսէք օրիորդ (կարդալով). « Ան-
թուան Մէլիքեան, նէկոսիան սըթիռէ, մէնքանթ-
սէդ ան . (բարգմանելով) վաճառական ետ քաշուած՝
Տ7 տարի :

ՄԱՐՏ. Ճիշդ . . . ինքը . . .

Ա. Մէլիք. Մեկուսի. Այ անզգամ . . . թղթա-
պանակս գտեր է . . .

Վ. Մէլիք. Եւ ի՞նչ իմանամ աղէկ . . . ամսւանա-
նալու ալ ելեր է եղեր . . . բայց աւելի աղէկ չէր
ըլլար որ կարգուելէ առաջ, մէյմըսա պարտքերդ վը-
ճարէիր . . .

ՀՈԳ. Պարտքէր . . .

Վ. Մէլիք. Այս, օրիորդ, եւ ահաւասիկ իւր պա-
հանջատեարցը հաշուեթզերը. 28 ոսկի Քաշըգձի-
ներուն մէջի գերձակ եէմէնիճեանին. 165 Փրանդ
Թրիքօթէօզին՝ ճերմակեղէններու դին, 225 Փրանդ
կոշկակար Հէրալին :

Ա. Մէլիք. Մեկուսի. Իմ խօսքերս ինծի կը ծախէ

Վ. Մէլիք. Կուացարար կնոշ հաշիւներն ալ զար :

Ա. Մէլիք. Ի՞նչ, լուացարար կին ալ կայ :

ՄԱՐՏ. Բայց ի՞ս ինչ ապուր ուտելու ելայ այսպիսի գործի մէջ մոռայ . . .

Ա. ՄԵԼԻՔ. Մեկուսի . Անզգամ սրիկայ . . .

Վ. ՄԵԼԻՔ. Եւ հիմա՝ կարծես որ այս վիճակիդ մէջ, քու ամուսնութեանդ հաճութիւն պիտի տամ:

Ա. ՄԵԼԻՔ. Մեկուսի . իմ յանդիմանութիւններս ինձի կը դարցընէ:

ՀՈԳ. Պարոն, հայրերնիդ իրաւունք ունի:

Ա. ՄԵԼԻՔ. Բայց այդ պարտքերը բան մը չեն, կ'երդնում որ զանոնք անմիջապէս վճարեմ . . . ես երբէք մէկու մը ստակ մը պարտք թողած չեմ, այնպէս չէ՞ Մարտիրոս աղայ, դու ըսէ:

ՄԱՐՏ. Ե՞ս . . . ես բան մը չեմ գիտեր, եւ բանի՛ մը չեմ խառնուիր:

Վ. ՄԵԼԻՔ. Կ'երդնում որ վճարեմ ըսիք, այնպէս չէ, այսքանը բաւական է, ես քու խօսքիդ կը վատահիմ . . . եւ որովհետեւ օրիորդն ալ խիստ սիրոս սիրեց, եւ գերաշշամենասիրեց, կընդունիմ քու ընտրութիւնդ եւ կըհաւանիմ ամուսնութեանդ, եկու աղջիկս համբուրեմ զքեզ (կը համբուրէ):

ՀՈԳ. Ի՞նչ բարի հայր մը . . .

Ա. ՄԵԼԻՔ. Մեկուսի Ս.յա ամէնը տես ու համբերէ . . .

Վ. ՄԵԼԻՔ. Ո՞հ, որդի՛ս, երանի թէ միայն այսպիսի պարկեցտ անձանց հետ յարաբերութիւն ունենացիր միշտ . . .

ՀՈԳ. Բայց ի՞նչ ըսել կուզէք . . .

Վ. ՄԵԼԻՔ. Ո՞հ, օրիորդ, շատ դժուարս կուգայ ձեզի ասոնք իմացնել առաջուց, բայց իմ հայրա-

կան պարտաւորութիւնս է . . . ահ, օրիորդ, այս տղուն անկարգ վարմաւնքէն սա սպիտակագոյն մազերս անգամ կը հեծեն :

ՀՈԳ. Ի՞նչ կըսէք, պարոն:

Ա. ՄԵԼԻՔ. Զրպարտութիւն է, զրպարտութիւն . . . ոչ ոք կարող է ապացուցով մը հաստատել այս խօսքերուն ձմարութիւնը . . .

Վ. ՄԵԼԻՔ. Իսկ այս նամակը, պարոն, այս նամակը որ հայրական հսկողութեանս չնորհիւ ձեռք անցուցի . . .

Ա. ՄԵԼԻՔ. Ի՞նչ նամակ . . .

ՄԱՐՏ. Մեկուսի նամակ . . . համար ու որդին է, ճիշդ իւր ձայնը . . .

Վ. ՄԵԼԻՔ. Տեսէք, օրիորդ:

ՄԱՐՏ. Եւ ՀՈԳ. կարդալով « Մօն չէու է իւնիք վէնսան :

ՀՈԳ. Ստորագրութիւնը տեսնեմ՝ ստորագրութիւնը . . .

Վ. ՄԵԼԻՔ. Ահաւասիկ . . . (կը ցուցընէ նամակին ներփերը) :

ՀՈԳ. Կարդալով: « Դօն էօժէնի » իւր էօժէնին . . . ահ, ի՞նչ անամօթութիւն . . . ոհ, Աստուած իմ, չնորհակալ եմ քեզ որ այս յայտնութեամբ՝ անհրաժեշտ դժբաղդութենէ մը կ'ազատոս զիս . . .

Ա. ՄԵԼԻՔ. Մեկուսի: Բայց էօժէնիին գործը ուսկից իմացաւ . . . ահ, անզգամ սրիկայ . . .

ՀՈԳ. Ալ մեր մէջ ամեն բան վերջացած է պարոն, ոչի՞նչ մի յուսաք ինձմէ . . .

ՄԱՐՏ. Շիտակը ես ուրախացայ . . .

Ա. Մէլիք. Ալ համբերութեանս չափը անցաւ ,
(արոռ մը ստեղով) ա՞նզգամ; կեցիր որ գլուխդ

Վ. Մէլիք. Թշուառական, հիմա ալ հօրդ դէմ
ձեռք կը վերցընես



ՏԵՍԻԼ ԺԳ.

ՆՈՅՆՔ , ՏԻԿԻՆ ՇՈՒՊԱՐԱՋԵԱՆ

Տ. ՇՈՒՊ. ձեռիլ չանրա մը: ԱԷՆՍԱՆ

Ա. Մէլիք. Մարիանէն է . . . ահ , հիմա պլ
կարգը իմն է :

Տ. ՇՈՒՊ. Ա. Մէլիքին նամոկդ առնելու եկայ :

Ա. Մէլիք. Տիկին . ալ հարկ չը մնաց մինչեւ
Պուքըշ երթան հայրս գտնելու համար :

Տ. ՇՈՒՊ. Ինչո՞ւ

Ա. Մէլիք. Որովհետեւ ահա հո՞ս դէմդ կեցած է
ինքը

ՄԱՐՏ. է' . . . աս աղէկ

Տ. ՇՈՒՊ. Վենսանին վրայ վազելով : Անտօնիկս
ոհ . . . որքան ալ փոխուէր, որքան աւրուէր է :

Վ. Մէլիք. Մեկուսիւ Աս ցնդած պառանն ովէ :

Տ. ՇՈՒՊ. Բայց հոգ չէ, հոգ չէ, ես զքեզ միշտ
կընդունիմ եւ ահա վրէմխնդրութիւնս ալ կը մոռ-
նամ . . . ալ իմն ես իմն . . . եկու գրկացս մէջ . .
(բազուկները բացած կուզէ ընդդրկել զինսան) :

Վ. Մէլիք. Ես երաղով: Տիկին, սխալ ըլլալու էք,
. . . ուրիշ դուռ մը նայեցէք, կաղաչեմ

Ա. Մէլիք. Ո՛չ, հայր իմ, Մարիանէն ամեն բան ,
պատմեց, ամեն բան խոստովանեցաւ ինձի, շիտակը
շատ անիրաւութիւն ըրեր էք իրեն, ուստի պէտք է
որ հիմա՝ տիկինին ձեր պատճառաւ կրած վշտերուն
վոխսարէն՝ իւր փափաքները կատարէք :

Վ. Մէլիք. Մեկուսիւ Հա հօրս հին բա-
րեկամուհիներէն

Ա. Մէլիք. Երբէք մոքէս չելէր որ՝ տիկինը ա-
նուշէլեններով եւ շաքարներով պատեալ կը քնացը-
նէր զիս միշտ . . . Արդարեւ բաւական ժամանակէ
՚ի վեր կապերնիդ խզուած է բայց կտորները գեռ
ամբողջ են եւ կրնանք վերստին կապել

Տ. ՇՈՒՊ. Այն, այն, կը կապուինք

Վ. Մէլիք. Տիկին, Եթէ կապուիլ կուզես յիմա-
րանոցը հրամէն եւ . . . զիս հանգիստ թող, ես զքեզ
ոչ տեսած եմ եւ ոչ ալ կը ճանչամ :

Տ. ՇՈՒՊ. Ռեկոլիկիր մը ուղղելով իրեն . կը ճանչ-
նամ ուրեմն աս ատրճանակը, ասի տեսած ես կար-
ծեմ, այնպէս չէ

ՀՈԳ. Եւ ՄԱՐՏ. կեցիք տիկին

Վ. Մէլիք. Բայց, խենդութիւն պէտք չէ, այդ-
պէս զէնքով կատակ չըլլար

Տ. ՇՈՒՊ. Կատակ . . . առ ուրեմն, մէկ , եր-
կուք

Վ. Մէլիք. Բայց, տիկին, կեցիք, կեցիք , վայր-
կեան մը . . . ահ . . . տիկին, ես բոլը հարըս-
տութիւնս կորսնցուցի եւ յետին չքաւորութեան
մէջ եմ այսօր, արդ եթէ դժբաղդաբար զաւակներ
ալ ունենանք . . . ինչ պիտի ըլլայ մեր զիճակը

Տ. ՇՈՒՊ. Այդ կողմէն բնաւ հոգ մի ըներ, ես հարուստ եմ եւ իմ հարստութիւնս երկուքնուս ալ կը բաւէ . . .

Ա. ՄԵԼԻՔ. Մեկուսի. Հարժւաստ . . .

Տ. ՇՈՒՊ. Քօնսօլիսէ՞ կուզէս, աղնամ կուզէս, 66ի փոխառութեան բաժիններէ՞ն կուզէս, քասապայի երկաթուղոցն բաժիններէ՞ն կուզէս . . . մանաւանդ ասոնցմէ՝ ամենէն շատ ունիմ . . .

Ա. ՄԵԼԻՔ. Բայց ի՞նչպէս, ուսկի՞ց ձեռքդ անցան ատոնք, գանձ մը գտար, ի՞նչ ըրիր . . .

Տ. ՇՈՒՊ. Այս, գանձ մը գտայ . . . այսինքն ծեր էրիկ մը որ երկու տարի հետա ապրելէ վերջը մեռնելով, տարին 1000 ոսկի եկամուտ բերող ժառանգութիւն մը թողուց ինձ :

Ա. ՄԵԼԻՔ. Մեկուսի. Տարին 1000 ոսկի . . . ի՞նքն ալ ամենեւին չէ՞ աւրըուէր եւ դեռ դէշ չէ . . . (Տ. Շուպարանեախին) Մարդիանէ . . .

Տ. ՇՈՒՊ. Ի՞նչ է ան երիտասարդ, ի՞նչ կուզէս :

Ա. ՄԵԼԻՔ. Ա՛հ . . . Մարդիանէ, ես երիտասարդ չեմ . . .

Տ. ՇՈՒՊ. Ո՞վ ես ուրեմն . . .

Ա. ՄԵԼԻՔ. Ի ծունը զալով. Ես . . . իմ հայրս եմ . . . այսինքն՝ ես իմ որդիս չեմ . . .

Տ. ՇՈՒՊ. Վեհանն Մելիխեանը ցոյց տալով. Բայց . . . ուրեմն այս պարո՞նը :

Վ. ՄԵԼԻՔ. Գյլսէն կեղծեամը հանելով եւ երեսի փոշիները բաշիլակով մարելով. Ես . . . իմ որդիս եմ . . . այսինքն՝ ես իմ հայրս չեմ . . .

Տ. ՇՈՒՊ. Ա. Մելիխին. Անտօնիկը . . .

Ա. ՄԵԼԻՔ. Ես ի՞նքս եմ . . .

Տ. ՇՈՒՊ. Ա՛հ . . . սիրտս վկայեց . . .

ՀՈՊ. Ի՞նչպէս, այս պարոնը . . . ձեր որդին է . . . եւ զիս համբուրեց ալ . . .

Ա. ՄԵԼԻՔ. Վնաս չունի, զոգուհի, թող ասկէ վերջը ուղածին չափ համբուրէ, ես հաւանութիւնս կուտամ, ի՞նչ կըսէք Մարտիրոս աղա :

ՄԱՐՏ. Այս, այս, ես ալ կը հաւանիմ :

Վ. ՄԵԼԻՔ. Կը հաւանիք . . .

ՄԱՐՏ. Է՞ . . . է՞ . . . ամուսնացի՞ր իրեն հետ, ամուսնացի՞ր . . . սա իս գործին մէջմի խառնէք եւ ի՞նչ կուզէք ան ըրէք . . .

Վ. ՄԵԼԻՔ. Ի՞նչ երջանկութիւն :

Տ. ՇՈՒՊ. Ա. Մելիխին. Բայց եթէ ասկէ վերջն ալ զիս խարես, գիտցած ըլլաս որ ձեռքէս չես աղասիր . . .

Ա. ՄԵԼԻՔ. Ալ ցկեանս քուկդ եմ, եւ ամենեւին քեզնէ ուրիշ կնոջ մը երեսն անգամ չը պիտի նայիմ . . . (Մեկուսի) ես ալ միւսին հետ պիտի ամուսնանամ կարծելով, իմ սիրուն իտալուհիս բաժնուեցայ՝ յիմարաբար . . շնուր երթամ սիրտը առնեմու վերատին հաշտուիմ իրեն հետ . . .

Վ. ՄԵԼԻՔ. Ուրեմն հայր եւ որդի ի միասին պիտի ընենք հարսնիքը, ո՞հ, ի՞նչ ուրախութիւն . . . եւ որքան զբօսալի պիտի ըլլայ մեր հանդէսը, կը հրաւիրեմ զձեզ մեր հարսանեաց . . Տիկնայք եւ Պարոնայք, հօրա, որդւոյս (Տ. ՇՈՒՊ. ի եւ ՀՈՊ. ի հետ միաձայն) եւ իմ կողմանէ . . .

1
2
3
4
5
6
7
8
9
10
11
12
13
14
15
16
17
18
19
20
21
22
23
24
25
26
27
28
29
30
31
32
33
34
35
36
37
38
39
40
41
42
43
44
45
46
47
48
49
50
51
52
53
54
55
56
57
58
59
60
61
62
63
64
65
66
67
68
69
70
71
72
73
74
75
76
77
78
79
80
81
82
83
84
85
86
87
88
89
90
91
92
93
94
95
96
97
98
99
100
101
102
103
104
105
106
107
108
109
110
111
112
113
114
115
116
117
118
119
120
121
122
123
124
125
126
127
128
129
130
131
132
133
134
135
136
137
138
139
140
141
142
143
144
145
146
147
148
149
150
151
152
153
154
155
156
157
158
159
160
161
162
163
164
165
166
167
168
169
170
171
172
173
174
175
176
177
178
179
180
181
182
183
184
185
186
187
188
189
190
191
192
193
194
195
196
197
198
199
200
201
202
203
204
205
206
207
208
209
210
211
212
213
214
215
216
217
218
219
220
221
222
223
224
225
226
227
228
229
230
231
232
233
234
235
236
237
238
239
240
241
242
243
244
245
246
247
248
249
250
251
252
253
254
255
256
257
258
259
260
261
262
263
264
265
266
267
268
269
270
271
272
273
274
275
276
277
278
279
280
281
282
283
284
285
286
287
288
289
290
291
292
293
294
295
296
297
298
299
300
301
302
303
304
305
306
307
308
309
310
311
312
313
314
315
316
317
318
319
320
321
322
323
324
325
326
327
328
329
330
331
332
333
334
335
336
337
338
339
340
341
342
343
344
345
346
347
348
349
350
351
352
353
354
355
356
357
358
359
360
361
362
363
364
365
366
367
368
369
370
371
372
373
374
375
376
377
378
379
380
381
382
383
384
385
386
387
388
389
390
391
392
393
394
395
396
397
398
399
400
401
402
403
404
405
406
407
408
409
410
411
412
413
414
415
416
417
418
419
420
421
422
423
424
425
426
427
428
429
430
431
432
433
434
435
436
437
438
439
440
441
442
443
444
445
446
447
448
449
450
451
452
453
454
455
456
457
458
459
460
461
462
463
464
465
466
467
468
469
470
471
472
473
474
475
476
477
478
479
480
481
482
483
484
485
486
487
488
489
490
491
492
493
494
495
496
497
498
499
500
501
502
503
504
505
506
507
508
509
510
511
512
513
514
515
516
517
518
519
520
521
522
523
524
525
526
527
528
529
530
531
532
533
534
535
536
537
538
539
540
541
542
543
544
545
546
547
548
549
550
551
552
553
554
555
556
557
558
559
559
560
561
562
563
564
565
566
567
568
569
569
570
571
572
573
574
575
576
577
578
579
579
580
581
582
583
584
585
586
587
588
589
589
590
591
592
593
594
595
596
597
598
599
599
600
601
602
603
604
605
606
607
608
609
609
610
611
612
613
614
615
616
617
618
619
619
620
621
622
623
624
625
626
627
628
629
629
630
631
632
633
634
635
636
637
638
639
639
640
641
642
643
644
645
646
647
648
649
649
650
651
652
653
654
655
656
657
658
659
659
660
661
662
663
664
665
666
667
668
669
669
670
671
672
673
674
675
676
677
678
679
679
680
681
682
683
684
685
686
687
688
689
689
690
691
692
693
694
695
696
697
698
699
699
700
701
702
703
704
705
706
707
708
709
709
710
711
712
713
714
715
716
717
718
719
719
720
721
722
723
724
725
726
727
728
729
729
730
731
732
733
734
735
736
737
738
739
739
740
741
742
743
744
745
746
747
748
749
749
750
751
752
753
754
755
756
757
758
759
759
760
761
762
763
764
765
766
767
768
769
769
770
771
772
773
774
775
776
777
778
779
779
780
781
782
783
784
785
786
787
788
789
789
790
791
792
793
794
795
796
797
798
799
799
800
801
802
803
804
805
806
807
808
809
809
810
811
812
813
814
815
816
817
818
819
819
820
821
822
823
824
825
826
827
828
829
829
830
831
832
833
834
835
836
837
838
839
839
840
841
842
843
844
845
846
847
848
849
849
850
851
852
853
854
855
856
857
858
859
859
860
861
862
863
864
865
866
867
868
869
869
870
871
872
873
874
875
876
877
878
879
879
880
881
882
883
884
885
886
887
888
889
889
890
891
892
893
894
895
896
897
898
899
899
900
901
902
903
904
905
906
907
908
909
909
910
911
912
913
914
915
916
917
918
919
919
920
921
922
923
924
925
926
927
928
929
929
930
931
932
933
934
935
936
937
938
939
939
940
941
942
943
944
945
946
947
948
949
949
950
951
952
953
954
955
956
957
958
959
959
960
961
962
963
964
965
966
967
968
969
969
970
971
972
973
974
975
976
977
978
979
979
980
981
982
983
984
985
986
987
988
989
989
990
991
992
993
994
995
996
997
998
999
999
1000



9-164 28C

2435-2441

ՀՀ Ազգային գրադարան



NL1711074

ՀՀ Ազգային գրադարան



NL1711073

ՀՀ Ազգային գրադարան



NL1711076

ՀՀ Ազգային գրադարան



NL1711072

ՀՀ Ազգային գրադարան



NL1711071

ՀՀ Ազգային գրադարան



NL1711075



